Քաղաքային կրթության գլխավոր վարչություն

Ք. Երևան

Հ. Գալստյանի անվ. թիվ 83 ավագ դպրոց

Դասղեկի աշխատանքային պլան

2023-2024 ուս. տարի

10^{4}– րդ դասարան

Դասղեկ՝ Ա. Մնացականյան

Կրթական – դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Հայեցի դաստիարակություն

1. **Հոգևոր դաստիարակություն**
   Կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ պետք է բարձրացվի հոգևոր դաստիարակությունը: Կարևոր է արժեքային համակարգի ձևավորումը և մշակութային ժառանգությունը փոխանցելու համար:
2. **Գեղագիտական դաստիարակություն**
   Աշակերտների մոտ պետք է զարգացնել գեղագիտական դաստիարակությունը: Ի՞նչ է գեղեցիկը: Լսել աշակերտների կարծիքը գեղեցիկի մասին: Գեղեցիկ կարող է լինել աշխատանքը, վերաբերմունքը, մոտեցումը երևույթի նկատմամբ:
3. **Ռազմա – հայրենասիրական դաստիարակություն**
   Հայրենասիրական ոգին բարձրացնելու համար պետք է հաճախակի այցելել մեր անմար հերոսների, ֆիդայիների շիրիմներին, այցելել եռաբլուր: Չմոռանանք քառօրյայի և սեպտեմբերյան հերոսամարտերը: Սովորողները պետք է հասկանան հայոց բանակի պատմական կոչումն ու առաքելությունը՝ որպես հայրենիքի անվտանգության ապահովման կարևոր գործոն:
4. **Ֆիզիկական դաստիարակություն**
   Առողջ հոգի, առողջ մարմում: Սրանով պետք է՞ առաջնորդվել ֆիզիկապես ամուր և ուժեղ լինելու համար: Առողջ ապրելակերպը կյանքի հիմնական նպատակն է, որի մեջ մեծ դեր ունի ֆիրզիկական դաստիարակությունը:
5. **Աշխատանքային դաստիարակություն**
   Աշխատանքը հասարակության նյութական և հոգևոր հարստության հիմնական աղբյուրն է: Աշխատանքն է՞ գեղեցկացնում մարդուն: Յուրաքանչյուր աշխատանք գեղեցիկ է յուրովի: Միայն և միայն աշխատանքով կարելի է հասնել նպատակին, որը ցանկացած մարդու ձգտումն է: Պետք է լավ հիշել, որ առանց աշխատանքի խոփն էլ է ժանգոտվում:

6. **<u>Բնապահպանական դաստիարակություն</u>**

Աշակերտների հետ պետք է քննարկել գլոբալ խնդիրները, որոնք հուզում են համայն մարդկությանը արդի ժամանակաշրջանում՝ էկոլոգիան, բնապահպանությունը: Այդ նպատակով մեծ աշխատանքներ պետք է տարվեն:

7. **<u>Դպրոց – ընտանիք կապը</u>**

Դպրոցը պետության հիմքն է:

Ընտանիքը հանդիսանում է պետության հենասյունը, կորիզը: Ուժեղ է այն պետությունը, որն ունի առողջ, սերտ ընտանիքներ: Շատ կարևոր է կապը դպրոցի, ծնողի, աշակերտի միջև: Դա հնարավորություն է տալիս աշակերտի մոտ ձևավորել բարձր բարոյական որակներ, ապահովել նրանց աշխատանքային ուսուցումն ու մասնագիտական կողմնորոշումը: Ծնողը պետք է տեղեկացված լինի իր երեխայի ամեն մի քայլից:

Ուսումնադաստիրարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիրարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Գիտելիքի օր: XXI դարը գիտելիքի դար է:	03.09	աշակերտ դասղեկ
II	Դասարանական կոլեկտիվի ձևավորում:	10.09	դասղեկ
III	Զրույց. «Սուրբ Խաչն ընդառաջ»:	17.09	աշակերտ դասղեկ
IV	Կատարել քննարկում, նվիրված ՀՀ-ի անկախության տոնի կապակցությամբ:	24.09	աշակերտ դասղեկ
V	Հայաստանի պետական խորհրդանիշները:	30.09	աշակերտ
VI	Զրույց. «Ես էլ ֆիդային եմ» :	08.10	աշակերտ դասղեկ
VII	Աշակերտների մոտ ձևավորել. «Պետական դրոշ, պետական զինանշան» հասկացությունները:	15.10	աշակերտ դասղեկ
VIII	Զրույց. «Էկոլոգիական հիմնախնդիրները» թեմայով:	22.10	դասղեկ
IX	Զրույց. «Պոլիէթիլենի տոպրակները և շրջակա միջավայրի աղտոտումը» թեմայով:	29.10	աշակերտ դասղեկ
X	«Ո՞վ եմ ես» - կատարել ինքնավերլուծություն:	12.11	աշակերտ
XI	«Շրջապատը և մենք» - թեման հնարավորություն կտա շրջապատող անձանց ճանաչել և գնահատել:	19.11	դասղեկ
XII	Զրույց. «Ի՞նչպես պաշտպանվել բնական աղետներից»:	03.12	աշակերտ դասղեկ
XIII	Քննարկում նվիրված երկրաշարժի զոհերի հիշատակի օրվան:	10.12	աշակերտ դասղեկ
XIV	Զրույց. «Առողջ ապրելակերպ» թեմայով:	17.12	դասղեկ
XV	Զրույց. «Լինել գիտակից և հանդուրժող»:	24.12	աշակերտ դասղեկ
XVI	Քննարկում նվիրված «Հայոց բանակին»:	28.12	դասղեկ
XVII	Ազգի և բանակի միասնությունը:	03.02	աշակերտ դասղեկ
XVIII	Ինչպե՞ս կանխել արտագաղթը:	10.02	աշակերտ դասղեկ
XIX	Զրույց. «Մեր պատմության հերոսական էջերը»:	17.02	աշակերտ դասղեկ
XX	Քննարկում. «Ծովից-ծով Հայաստան» թեմայով:	24.02	աշակերտ դասղեկ
XXI	Զրույց. «Կնոջ դերը պատմության, ազգի զարգացման գործում»:	03.03	աշակերտ դասղեկ

XXII	Զրույց. «Քաղաքացիական ինքնություն» թեմայով:	10.03	աշակերտ դասղեկ
XXIII	Զրույց բարոյականության վերաբերյալ:	17.03	աշակերտ
XXIV	Քննարկում նվիրված հայոց պետականությանը:	24.03	աշակերտ դասղեկ
XXV	Մայրության և գեղեցկության տոն:	07.04	աշակերտ դասղեկ
XXVI	Հայ ֆիդայիներ:	14.04	աշակերտ դասղեկ
XXVII	Զրույց հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:	21.04	աշակերտ դասղեկ
XXVIII	Աշխարհը և հայոց ցեղասպանության ճանաչումը:	28.04	աշակերտ դասղեկ
XXIX	Քննարկում նվիրված հաղթանակի տոնին:	03.05	աշակերտ դասղեկ
XXX	Արցախյան ազատամարտի հերոսները:	12.05	աշակերտ դասղեկ
XXXI	Զրույց. «Աշխատանք ենք փնտրում» թեմայով: Կարևոր են բոլոր մասնագիտությունները:	19.05	աշակերտ դասղեկ
XXXII	Զրույց. «Ի՞նչ ձեռքբերումներ ունեցա դպրոցում»:	22.05	աշակերտ դասղեկ
XXXIII	Ի՞նչ է ընկերասիրությունը:	25.05	աշակերտ դասղեկ
XXXIV	Վերջին զանգ – հրաժեշտ դպրոցին:	26.05	աշակերտ դասղեկ

Ամբողջ տարվա ընթացքում կատարվում են նաև հետևյալ աշխատանքները.

1. Դասարանի մասնակցությունը համադպրոցական, տարածքային միջոցառումներին:
2. Կազմում ենք դաստիարակչական աշխատանքների թեմատիկան:

Սեպտեմբեր Զրույց. «Մենք և մեր դասարանը»:

Հոկտեմբեր Ծանոթանալ հայ մշակութային – հոգևոր արժեքներին:

Նոյեմբեր Հիշել և գնահատել արժանավոր հայ զավակներին:

Դեկտեմբեր Զրույց – քննարկում ավերիչ երկրաշարժերի մասին, բնական աղետների և դրանց հետևանքների մասին:

Հունվար Զրույց նվիրված հայոց բանակի ստեղծման մասին:

Փետրվար Զրույց. «Ընկերասիրությունը վեհ զգացմունք է» թեմայով:

Մարտ Գեղեցկության տոն:

Ապրիլ Մայրության տոն:

Մայիս Հաղթանակների ամիսը հայ ժողովրդի համար:

Հունիս Վերջին զանգ:

3. Աշխատանք է տարվում դժվար դաստիարակվող, սոցիալապես անբարենպաստ վիճակում գտնվող, ծնողազուրկ աշակերտների հետ:
4. Կատարվում են դասալսումներ:
5. Կազմակերպվում են ծնողական ժողովներ:
6. Կատարվում են անհատական աշխատանքներ ծնողների հետ:
7. Ընտրվում է դասարանի ծնողական խորհրդի կազմը:
8. Աշխատանքներ են կատարվում դասարանի ծնողական խորհրդի հետ:
9. Կազմում ենք տարեկան հաշվետվություն: